

ԱՆՍԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Խաչատոր Աբովյանի անվան հայկական պետական
մանկարժական համալսարանի քաղաքագիտության և
իրավունքի պատմության ամբիոնի հայցորդ

ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ԳԼՈԲԱԼԱՑՎՈՂ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Գլոբալացման գործնքացները, փոխելով
աշխարհաքաղական պատկերները և միջազ-
գային անվտանգության միջավայրը, հարկադրում
են մարդկանց ու երկրներին արձագանքել 21-րդ
դարի առաջադրած նոր սպառնալիքներին ու մար-
տահրավերներին: Հիմ մարտահրավերները տեղը
զիցել են նորերին, որոնք խթանել են անվտանգու-
թյան, հակամարտության և խաղաղության գաղա-
փարների շուրջ նոր մտածողության ձևավորմանը:
Նոր աշխարհի կարևորագույն խնդիրներն են նաև
ազգային պետականության և ազգային անվտան-
գության պահպանման հարցերը: Ուստի, կարեռելով
արդիական ու կենսականորեն անհրաժեշտ
համարվող անվտանգություն երևույթը, փորձենք
հանգանակութեն ներկայացնել այս եզրույթի տար-
բեր բացատրությունները:

«Անվտանգություն» հասկացությունը տար-
բեր աղբյուրներում ձևակերպված է տարբեր կերպ՝
մի վիճակ, որի ժամանակ վտանգ չի սպառնում, կա
վտանգից պաշտպանվածություն՝ կամ վտանգից
բացակայություն, վիճակ, երբ որևէ մեկին կամ մի
բանի վտանգ չի սպառնում²:

Ըստ Բարի Բյուզանի՝ «Անվտանգությունը
կարելի է ընկալել որպես սպառնալիքի դեմ պայքա-
րելու և պետությունների ու հասարակությունների
ինքնության և քննամական համարվող ուժերի դեմ
իրենց ֆունկցիոնալ ամբողջականության պահ-
պանման ունակությունը³:

Քաղաքագետ Լ. Շիրինյանի բնորոշմանը
անվտանգությունը հասարակական օրգանիզմի
այս վիճակն է, երբ նա, չնայած ներքին և արտա-
քին անբարենապատ ներգործություններին, պահ-
պանում է իր ամբողջությունն ու ինքնազարգա-
ման կարողությունը⁴:

Այսինքն՝ տարբեր բնորոշումների ընդհան-
րացումով կարելի է եզրակացնել, որ անվտանգու-
թյունը մարդկության բարեկեցությունն ապահովող
իհմնական գործուն է, մի վիճակ, որին ականա
փորձում է հասնել յուրաքանչյուր՝ ձգտելով անվ-
տանգ ու ապահով դրանել իրեն շրջապատող աշ-
խարհը և բացառել ինքնապաշտպանության և
սպառնալիքի գոյությունը:

Սակայն երևույթն ավելի լայն ու խոր իմաս-

տավորում է ստանում, երբ առնչվում է ազգային
անվտանգությանը:

Քաղաքագիտության հանրագիտական բա-
ռարանում «ազգային անվտանգություն» հասկա-
ցությունը սահմանվում է որպես արտաքին և ներ-
քին վտանգներից հասարակության և պետության
կենսական կարևորագույն շահերի պաշտպանվա-
ծության վիճակը, ինչպես նաև քաղաքական, տն-
տեսական, գիտատեխնիկական, տեղեկատվա-
կան, բնապահպանական և այլ տիպի անվտանգու-
թյունների հանրագումարը⁵:

Երբեմն ազգային անվտանգությունը սահ-
մանվում է որպես ազգային կենսակերպի
և գոյապահպանության, ինչպես նաև զարգացման
նկատմամբ սպառնալիքների բացակայություն⁶:

Ըստ Լ. Շիրինյանի՝ ազգային անվտանգու-
թյունը կապերի ու հարաբերությունների այնպիսի
ամբողջություն է, որոնք բնութագրում են անձի, հա-
սարակության և պետության մի վիճակ, երբ ապա-
հովում է նրանց հաստատուն գոյությունը, կենսա-
կան պահաճմունքների բավարարումն ու իրակա-
նացումը, ներքին ու արտաքին վտանգների կասե-
ցումը, անձի, հասարակության ու պետության ինք-
նազարգացումն ու առաջընթացը: Ազգային անվ-
տանգությունն արտացոլում է անվտանգության
կապը ազգի՝ որպես ամբողջական համակարգի
հետ: Վերջինս իր մեջ ընդգրկում է հասարակական
ինստիտուտներն ու նրանց գործունեությունը,
որոնք և ապահովում են ազգային շահերի իրակա-
նացումը պատմականորեն ձևավորված կոնկրետ
իրադրության մեջ: Ազգը տվյալ դեպքում հանդես է
գալիս որպես էթնիկ մի հանրություն՝ իր ավան-
դույթներով, սովորություններով ու մշակույթով⁷:

Միաժամանակ, արտաքին և ներքին
վտանգներից հասարակության և պետության կեն-
սական շահերի պաշտպանվածության վիճակն
անվանվում է նաև պետական անվտանգություն: Մի
խումբ հեղինակներ պետական անվտանգու-
թյունը դիտում են որպես պետականության և երկ-
րում հասարակական կարգի ամրության, տարած-
քային ամբողջականության անձեռնմխելիության և
արտաքին ու ներքին քաղաքականության որոշման
հարցում անկախության վիճակ, մեկ այլ խումբ՝ որ-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պես հակառակորդի քայլայիշ գործունեությունից պաշտպանված վիճակ⁸, մյուսների պնդմամբ՝ պետական անվտանգությունը քշնամական ուժերին հակադրվելու պետության ընդունակությունն է և ժողովրդի շահերի պաշտպանությունը:

Ընդհանուր առմամբ «ազգային անվտանգություն» և «պետական անվտանգություն» հասկացություններն ունեն հոմանիշային ընդհանրություն, սակայն, առանձին դեպքերում, ազգային անվտանգությունն օգտագործվում է ավելի լայն առումով՝ ընդգրկելով պետական անվտանգությունն իրեւ մասնավոր դեպք, և, քանի որ ազգերը կազմակերպվում են պետության ձևով, պետական անվտանգությունն ինքնին դառնում է ազգային անվտանգության բաղադրիչը՝ ներառելով քաղաքականությունը, մշակույթը, սոցիալական ոլորտը, քնապահպանությունը, գյուղատնտեսությունը, տեղեկատվական և էներգետիկ դաշտերը և այլն:

Ընդունված է առանձնացնել ազգային անվտանգության երեք սուբյեկտ՝ անձ, հասարակություն և պետություն:

Այս առիթով մեջքերենք Թոմաս Հորսի այն դիտարկումը, որ պետության և պետական քաղաքականության հիմնախնդիրը պետության, հասարակության և անձի անվտանգությունն է միաժամանակ⁹:

Մեկ այլ աղբյուրում նշվում է, որ ազգային անվտանգությունը համակարգ է, որտեղ անընդհատ փոխհարաբերության մեջ են գտնվում անձի, հասարակության և պետության շահերն ու դրանց մերին և արտաքին սպառնալիքները:

Արդի պայմաններում անվտանգության ապահովման մերողների մշակումն առնշվում է այնպիսի երևույթների ծագմանն ու ակնթարքային գարգացմանը, ինչպիսիք են գլոբալացումը և միջազգային ինտեգրումը (համարկումը): Ակնհայտ է՝ գլոբալացման արդյունքում աշխարհն աստիճանաբար դառնում է միասնական համակարգ, ինչն էլ մտավախություն է առաջացնում, որ արագործեն գարգացող այս գործընթացի հետևանքով տեղի է ունենում համաշխարհային ստանդարտացում և ազգային մշակույթների միօրինակացում, որոնք ահազանգ են մարդկությանը:

Պատմական զարգացման ընթացքում իր կուտակած հարուստ կենսափորձով իմաստնացած մարդկությունը նոր հազարամյակում իրեն բազում նոր խնդիրներ է առաջադրում: Գլոբալացման գործընթացը, ցանկացած երկրի առջև մեծ հնարավորություններ ու չափազանց գրավիչ հեռանկարներ բացելով, գերծ չէ տարաբնույթ վտանգներից ու սպառնալիքներից, որոնցից, մասնավորապես, կարելի է առանձնացնել 21-րդ դարը բնորոշող

1. քաղաքական սպառնալիքները՝ ներքին քաղաքական անկայունություն, ահաբեկչություն, մարդու իրավունքների ուսնահարում,

2. տնտեսական սպառնալիքները՝ աղքատություն, հարուստ և աղքատ երկրների միջև աճող անդունդ, ներքին ֆինանսական ճգնաժամեր, հարուստ և աղքատ երկրների միջև մեծացող անդունդ, տնտեսապես հզոր պետությունների կամ անկայուն երկրների հարևանության ազդեցություն և հեղինակային իրավունքների խախտում,

3. շրջակա միջավայրի կամ մարդու ստեղծած սպառնալիքները՝ միջուկային աղետ, գլոբալ բնական միջավայրի փոփոխություններ, հողի և ջրի աղտոտում, սննդի և այլ ռեսուրսների պակաս,

4. սոցիալական սպառնալիքները՝ փոքրամասնություն-մեծամասնություն, հակամարտություն, քաղաքների գերբնակեցվածություն (ուրբանիզացիա) և գյուղերի ամայացում, քմրանյութերի միջազգային առևտուր, անվերահսկելի զանգվածային արտագաղթ և հիվանդություններ¹²:

Համաշխարհային զարգացման ներկա փուլին բնորոշ են միջազգային, տարածաշրջանային և դրանց համատեքստում՝ ազգային անվտանգության խնդիրները, որոնց լուծումը հնարավոր է տալ միայն փոխազդակցության և միասնական որոշումներ կայացնելով ուղին ընտրելով՝ այն միանշանակ ընդունելով իրեւ դարաշրջանի պարտադրանքը: Երկրաքաղաքական անկանխատեսելի թվացող զարգացումները հանգեցրել են դեռևս ոչ վաղ անցյալում անլուծելի թվացող մի շարք խնդիրների առաջացմանը: Ուստի, աշխարհաքաղաքական զարգացումների ներկա փուլում մշակութային ու տեղեկատվական մերձեցման համատեքստում առաջ են մնվում ազգային ինքնության պահպանման անհրաժեշտ տարր հանդիսացող հոգեկոր մշակութային անվտանգության պահպանման, միջազգային ահաբեկչությունների, էքնիկ և տարածաշրջանային հակամարտությունների կարգավորման խնդիրները:

Երկրաքաղաքական ներկայիս զարգացումները թելադրում են առավելագույն զգուշավորություն մասնավորապես փոքրաթիվ ժողովուրդների ինքնության պահպանման, ազգային անվտանգության պահպանման, ազգային քաղաքականության կերտման և ազգային հիմնարար արժեքների ստեղծման ու պահպանման հարցերում: Ուստի, յուրաքանչյուր ազգ ստեղծված վտանգներին դիմակայելու համար պետք է ունենա իր կենսակերպին համապատասխանող ազգային անվտանգության պահպանման ամուր համակարգ, որի հիմքում պետք է ընկած լինի տարաբնույթ սպառնալիքների բացահայտումը, կանխարգելումն ու

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Խափանումը:

Դարաշրջանը բնութագրող մի շարք արդիական խնդիրների կողքին իրեւ առավել վտանգավոր մարտահրավեր կարելի է դիտարկել կիրերանցագործությունները և տեղեկատվական տեխնոլոգիաների երկակի դերը: Սի կողմից իրեւ առաջնարար ապահովող կարևորագույն գործոն տեղեկատվական հարթությունում ամրապնդելով երկրի դիրքերը՝ մեծացնում են ազգային հզորության ավանդական բաղադրատարբերի՝ դիվանագիտության, ռազմական, տնտեսական ոլորտների տեսակարար կշիռը, մյուս կողմից տեղեկատվական տեխնոլոգիաները դառնում են միջազգային ահարեւկության և անվտանգության ու խաղաղության սասաննան ամենավտանգավոր գործիքներ: Ուստի, հատկապես վերջին տարիներին, տարբեր միջազգային կազմակերպություններ աշխատում են տեղեկատվական տեխնոլոգիաները ծառայեցնել մասնավորապես միջազգային անվտանգությանը սպառնացող վտանգները չեզոքացնելու և մարդու իրավունքների ու ազատությունների ուղնահարումը կանխելու ուղղությամբ օգտագործելուն:

Գլոբալացվող աշխարհում Հայաստանն իր տեղն ունի և ներգրավված է միջազգային ու տարածաշրջանային զարգացումներին ուղղված մի շարք միջոցառումներում: Անառարկելի է այն փաստը, որ մեր երկիրի անվտանգությունն իր ներպետական նշանակությունից բացի նաև տարածաշրջանային և գլոբալ անվտանգության անքաժանելի մասն է: Եվ, հարկավ, իրեւ համաշխարհային իրականության անքաղաքնելի մաս, վտանգներից ու սպառնալիքներից զերծ չեն նաև Հայաստանի Հանրապետությունն ու աշխարհասփյուր հայությունը, որ դարերի հոլովույթում գոյատևել է միայն իր համառությամբ ու ազգային ինքնուրույն միավոր մնալու անսասան կամքով, անշուշտ, անմասն չմնալով համաշխարհային քաղաքական ու մշակութային կյանքից: Այս գիտակցությունը մեր մեջ ամուր նստած է ու նոյնիսկ, կարելի է ասել, արմատակալած մեր գոյության ողջ ընթացքում:

Մեջբերենք հայ մեծանուն բանաստեղծ Վահան Տերյանի՝ դեռևս 20-րդ դարի սկզբին ասված խոսքը. «Մեր մոտավոր նախատակն է կուլտուրական մի ժողովուրդ լինել, այսինքն զարգացնել մեր բոլոր ստեղծագործ ուժերը, այլ խոսքով արտահայտել մեզ կյանքում, այսինքն՝ մտնել կուլտուրական մարդկության գերդաստանը ոչ իբր խորք զավակ կամ ծովյ ու խավար մի ստրուկ, ծովել մեր կյանքը համաշխարհային կյանքի հոսանքին՝ պահպանելով մեր հոգուն առանձնահատուկ գծերն ու գոյները: Այլ խոսքով՝ ունենալ մեր ինքնատիպ կուլտուրան, մեր ստեղծագործական բաժինը հա-

նուր մարդկության ստեղծագործության մեջ»¹³:

Հավելենք, որ այս ամենին հասնելու համար նախ և առաջ անհրաժեշտ է ունենալ ազգային մտածողություն, ազգային ինքնազիտակցություն և ազգային արժեքներն անաղարտ պահելու հաստատում կամք, քանի ազգային անվտանգությունը նախ և առաջ արտացոլվում է ազգային մտածողության, ազգի քաղաքական, տնտեսական, գաղափարական, ռազմական և այլ հայացքներում, որոնք ներկայացնում են նրա հոգևոր զարգացման բովանդակությունը, մակարդակն ու առանձնահատկությունները¹⁴:

Գլոբալացում կոչվող համաշխարհային ամենակուլ այս գործնական ավելի մեծ մտավախություն է առաջացնում ազգամշակութային ինքնության կորացյան և ուժացման խնդիրներում: Այսօր, ավելի քան երրես, մեր առջև կանգնած է ազգային ինքնության պահպանման խնդիրը: Այն, անկասկած, միայն ազգային հայեցակարգեր ու ռազմավարություն մշակելը չէ, այլ իր պատմությանը քաջածանոթ յուրաքանչյուր հայ մարդու՝ գլոբալացվող աշխարհի հոլովույթում իր տեսակն ամուր պահելու պարզ ընկալումը: Կարծում ենք, չնայած դարավոր պատմության հոլովույթում քաղմից արծարծված է այս հարցը և, նոյնիսկ, կարելի է ասել, քաղմից ծեծված, սակայն, մեկ անգամ ևս հարկ է նշել, որ ազգային ինքնության պահպանման մեր ամենահզոր գործիքը լեզուն է, որը վտանգված է: Լեզվի անաղարտությունն այսօր կարող է ամուր վահանի դեր կատարել մեր երկրի ազգային անվտանգության, պետականության և ինքնության պահպանման գործում:

Մեջբերենք Լ. Շիրինյանի հետևյալ բնորշումը՝ արդի Հայաստանի երկրառազմավարությունը պետք է մշակվի ու հիմնավորվի առարկայական ուոլություն՝ երկրի երկրարդարական դիրքերով և պատմամշակութային, քաղաքակրթական առանձնահատկությունների, հայոց ազգային ինքնության ճանաչողությամբ (ընդգծում՝ հետ), իսկ պետական կառույցի վոփիխությունների տրամաբանությունը պետք է կատարվի հիշյալ գործոնների պահանջների ոգով:

Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է ազգային անվտանգության իր ռազմավարությունը, որը պետության, հասարակության և անհատի անվտանգության ապահովման, կայուն զարգացման, հայ ինքնության պահպանման պետական քաղաքականության համակարգն է: Այն իրականացվում է կենսագործունեության բոլոր ոլորտների համար ժողովրդավարական արժեքների համակարգի վրա հիմնված միասնական պետական

ԱՐԴԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

քաղաքականության մշակման և իրազործման միջոցով»¹⁶:

Ամփոփելով, նշենք, որ, հիրավի, մեր պետական քաղաքականության հիմքում ընկած է աշխարհաքաղաքական զարգացումներից հետ չմնալու, աշխարհում տեղի ունեցող դրական բոլոր փոփոխություններին արձագանքելու, համաշխարհային գործընթացին ինտեգրվելու գաղափարը, հաշվի առնելով, որ արդի գլոբալացվող աշխարհի նոր

մարտահրավերներին դիմակայելու և համարժեք հակագիրելու համար անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր պետություն և հասարակություն ենթարկվի դարաշրջանի փոփոխություններին՝ ձգտելով նոր մշակող հայեցակարգերի միջոցով բարեփոխել կյանքը՝ առանց խեղաքուրելու ազգային նկարագրը և վտանգի ենթարկելու սեփական երկրի ազգային անվտանգությունը:

¹ Steu Ожегов С.И., Шведова Н.Ф., Толковый словарь русского языка.- М.: Азъ, 1994, С.928.

² Steu Ժամանակակից հայոց լեզվի բացադրական բառարան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Եր., 1969, հատոր 1, էջ 137:

³ Steu Buzan Barry, "New Patterns of Global Security in the Twenty-first Century" International Affairs, 1991, pp. 432-433.

⁴ Steu Շիրինյան Լ., Ազգային անվտանգություն. Հասկացությունը, Էությունը, ձևավորումը, առաջնահերթությունը /Հասարակական միտքը արդի ժամանակաշրջանում/, ՀՀ ԳԱ ՓՄԻԻ, Եր., 2011, էջ 179:

⁵ Steu Քաղաքագիտություն: Հանրագիտական բառարան /Պողոսյան Վ., Միրումյան Կ., Բարաջանյան Ա., Աստվածատրյուն Ս., Եր. 2004, էջ 13-14:

⁶ Steu Շահգելյան Մ., Ազգային անվտանգություն. Հասկացությունը, Էությունը, ձևավորումը, առաջնահերթությունները, «Նորավաճակ» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2003, էջ 3:

⁷ Steu Շիրինյան Լ., Ազգային անվտանգություն. Հասկացությունը, Էությունը, ձևավորումը, առաջնահերթությունը /Հասարակական միտքը արդի ժամանակաշրջանում/, ՀՀ ԳԱ ՓՄԻԻ, Եր., 2011, էջ 179:

⁸ Steu Արխիս Ա., Գործեցի Ա., Միհայլո Բ. Էкономическая безопасность: оценки проблемы, способы обеспечения, Вопросы экономики, N12, 1994, С.36-44.

⁹ Steu Основы экономической безопасности, под ред. Е.А. Олейникова, Москва, 1997.

¹⁰ Steu Trager F., Simone F., An Introduction to the Study of National Security//National Security and American Society: Theory, Process and Policy. Ed by Trager F., Kronenberg P., Lawrence, University of Kansas, 1973.

¹¹ Steu Մարկոսյան Ա., Տնտեսական անվտանգության հիմնախնդիրները. Մերուդարձնություն և արդյունքներ, «Նորավաճակ» գիտակրթական հիմնադրամ, Եր., 2005, էջ 29:

¹² Steu Անվտանգության ոլորտի խորհրդատվական վերահսկողություն. սկզբունքներ, լծակներ և գործունեություն, Լուսան, 2003, էջ 25:

¹³ Steu Տերյան Վ., Հայ գրականության գալիք օրը, Երկեր, Սովետ. գրող, 1989, էջ 314:

¹⁴ Steu Воронов А.А. Основы национальной безопасности. Научно-практическое пособие. Общая часть., М., 2000, С. 1.

¹⁵ Steu Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը (Երկրաքաղաքական-քաղաքակրթական ակնարկ), Եր., 2010, էջ 13:

¹⁶ Steu «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարություն», «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում, 2007, էջ 13:

РЕЗЮМЕ

Вопросы национальной безопасности в современном глобализирующемся мире

Процесс глобализации, изменяя общечеловеческие представления о международной безопасности, вынуждает человечество иначе откликаться на новые вызовы и угрозы. Старые проблемы уступили новым, способствуя формированию нового мышления в сфере безопасности, противостояния и мира. В современном мире важнейшими являются также вопросы, касающиеся национальной государственности и безопасности. Считая данную проблему актуальной и жизненно необходимой, автор в данной статье представляет некоторые проблемы государственной безопасности, продиктованные новой эпохой.

SUMMARY

National security issues in the modern globalized World

Processes of globalization, changing geopolitical images and international security environment, makes people and countries to respond to the 21st century's new threats and challenges. Old challenges to yield place to new people, promote security, peace and conflict of ideas about the formation of a new way of thinking. New world's most important tasks of the national security state and national issues. Highlighting the urgent and vital as security phenomenon, we tried to present in detail the article's era national security issues.